

Հանդիպում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ

26.01.2017



ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը հյուրընկալել էր Մանկական զարգացման հիմնադրամի տնօրեն Լուսինե Միմոնյանին և «Երեխաների խոսքի ուժը» ծրագրի համակարգողներին (Քրիստինե Բաղդասարյան, Արտյոմ Հախնազարյան): Հանդիպմանը մասնակցում էին մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը և ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Արամ Գրիգորյանը: Մարզպետ Հ. Սարգսյանը ողջունեց հյուրերին և նշեց, որ ինքն անձամբ և մարզպետարանի ողջ աշխատակազմը պատրաստակամ են մարզի համայնքների նախադպրոցական կրթական ծրագրերի բարեփոխման նպատակով կազմակերպվող ցանկացած համագործակցության:

Քննարկվեց Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր և Վայք համայնքներում «Beeline»-ի և Մանկական զարգացման հիմնադրամի կողմից մեկնարկող «Երեխաների խոսքի ուժը» ծրագրի շրջանակներում հանրային իրազեկման և միջոցառումների կազմակերպման գործընթացին վերաբերող հարցեր:

Նշենք, որ ծրագրի նպատակն է՝ խթանել համայնքի զարգացումը նպաստելով երեխայի, որպես համայնքի բջիջ, ներդաշնակ զարգացմանն և որպես համայնքի մասնիկ ինքնագիտակցության բարձրացմանը:

Ծրագրի կարևոր խնդիրներն են.

1. Տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ ՏԻՄ) կից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (այսուհետ՝ ԽՀՀ) հետ երկխոսության միջոցով վեր հանել երեխայի կարիքները համայնքում:
2. Հզորացնել երեխաներին՝ որպես համայնքի մասնիկ, բարձրացնել նրանց ինքնագիտակցությունը՝ շեշտադրվելով համայնքի առջև ունեցած պարտավորություններն ու համայնքում սեփական բարեկեցության կերտման կարևորությունը:
3. Բարձրացնել ծնողների և համայնքի բնակիչների իրազեկվածությունը երեխաների բարեկեցության վերաբերյալ, որը բխում է երեխաների ցանկություններից, երազանքից, ինչպես նաև համայնքի զարգացման երաշխիք է:

Ծրագիրը նախադրյալ է հանդիսանում ՏԻՄ-ՀԿ-Տեղական բիզնես համագործակցության՝ որպես սկիզբ՝ համայնքներում հետագա երեխայակենտրոն համատեղ աշխատանքների: Այն նպատակ ունի նաև՝ խթանելու Հայաստանում երեխաների պաշտպանության ոլորտում արդյունավետ եռակողմ համագործակցության գործընթացը:

Մարզպետն ամփոփիչ խոսքում շնորհակալություն հայտնեց հյուրերին, իսկ ձեռնարկվելիք ծրագրին մաղթեց հաջողություն ու շարունակելիություն: